կարողութիւնն իմ այսչափ էր. մի՛ մեղադրէք. զի ի մանկութենէ տկարութիւն ունիմ. վասն այն ոչ հետեւեցա ուսանել զգիրն. այլ գրեցի զգիրս ի երկրին Մաճառաց, ի գիւղաքաղաքն Ճուրճով. իշխանութեան երկրիս Ըշտեֆան Լազարին. ի դառն ժամանակիս որ սուլթան Մէհըմէտն որդին Իպրահիմին՝ վասն ծովացեալ մեղաց մերոց եկաւ ի վերայ Լեհաց և Գազարաց երկրին վերա, և Պուղտանաց երկիրն (յ)երթեւեկողաց հեծելոց Տաճկաց և Լեհաց աւերեցաւ. Տաճիկն Լեհաց երկիրն կ'աւիրէր՝ ամառն, ձմեռն՝ Լեհն գայր Պուղտանաց երկիրն կ'աւիրէր։ Եւ ես տառապեալս վասն սիրոյ սուրբ եկեղեցեացն՝ վանիցն չէի հրաժարեր. մինչեւ երկիցս անգամ կողոպտեցին. ապա մերկիկ գլխիբաց՝ մորթի մի քամակս կապեալ՝ փախեա ելա երկիրս Մաճառաց. կէս մի ժողովրդոցս աստ փախեալ էին։ Միթէ Աստուած ողորմի երկրիս Պուղտանաց, որ խաղաղութիւն տայ թագաւորաց, զի մի՛ օտարութեամբ մեռանիմք։ Այս գրեցաւ թվին ՌՃԻԵ. սեպտեմբեր ամսոյ Ե։ [Մաշտոց ի Ս. Ղազար]։

1678.

Սա է տապան ողորմած հոգի Մեծխաթունին, կողակցուն Պարոն Յակոբին, մահտեսի Մինասի որդուն, Եազլովա քաղաքին երեսփոխանին. յանգեաւ ի Քրիստոս թվ. ՌՃԻԶին, ամսոյ ապիլի Զ. օրն ուրբաթ։ [Ի Վարսաւիա, յեկեղեցւոջ Դումիանիկեանց]։

1679.

Գրեցաւ գիրս ձեռամբ Աբրոդադէս Եազլովցացի իրիցու ի քաղաքն Սիլիստրէ, ի թվականիս Հայոց ՌՃԻԷին, յուլիս ամսոյ ԺԷին, օրն երկուշաբթի։

1683.

Որ ինչ ի գրքի աստ պարունակին՝ ժողովեցան յինէն ի զանազանից գրոց և ի տետրակաց հնացելոց, մինչ պանդխտանայի ի Վերին Հայս, և ի մի պարփակեցան. ոչ իբր զի իցեն վէպք ուղղաշաւիղք և փորձեցեալք ի մէնջ իբր այնպիսիք. այլ զի սովոր եմք ի բանից հակառակացն առնուլ մեզ զէն ընդդէմ նոցին, և զի բազում ինչ ի սոսում գտանին և վկայութիւնք եւս. և այլն... Ես (Վարդան Յունանեան) ոչ հեղինակ սորին՝ այլ հաւաքող միայն եմ. որպէս և զբազումս զայլս գրեանս ընդօրինակեցի ի Հայոց երկրէն, որք չէին աստ յերկրիս Լեհաց, վասն ջատագովութեան կաթուղիկէ հաւատոյ ընդդէմ ոմանց հակառակասիրաց մերազնեայց։ Ողջ լերուք. 1683։ — [Ի Ս. Ղազար]։